# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆՔ

## Ն · ՊՕԽԱԼՕՅ
## ԱՐՈՒԵՍՏ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ

### ԵՐԳ Բ․

(Շարունակութիւն)

*Երգիծանքըն վաղեմի ստեղծաբանիցս օտարախոր[թ]*
*Ըմպըրդեալ 'ի տաղս երգոց մերոց անկան յիտալիայ։*
*Հրապուրեալ խաժամուժն ամբոխ ընդ թիւրն հաճելութիւն,*
*Ցայն ինչ եկեալն 'ի պարէն ընթանային անյագաբար․*
*Գըրգռեալ զնոցին խեռութիւն շնորհք հաճոյից հասարակաց՝*
*Ջրահեղեղ յաճախագունդ յորդեաց ջոլիրն 'ի Պառնասոս։*
*Ի Մադրիգ անդըր խանդար նորին մուծաւ նախ զառաջին․*
*Նուագն ինքնին սիգապանծ 'ի հազըս 'ի նոյն ըմբըռնեցաւ․*
*Փափկատենչ 'ի գըրգանս իւր զայն կոչեաւ Ողբերգութիւն․*
*Ըզնոյն եղերգ երգոց առին խանդիցն 'ի չուք կեղերջական․*
*Հօգ դիւցազին 'ի թատեր այն էր 'ի ցոյցըն պերճանաց․*
*Եւ ոչ այլ՝ սոսկ յերգիծանաց՝ սիրողն իշխան եղև հեծել․*
*Ընդ և հովիւք տարփածուք համայն ջայլիւքըն նորանոր*
*Այժմիկ առաւել քան սիրուհեացըն մըտերիմք․*
*Ընծնիւր բառք երկկերպեան առին դիմակս յամենայնի․*
*Քան 'ի տաղս յայժ առաւել մուտ սա եգիտ յարձակըն բան․*
*Ջատագովն 'ի յատենի նովին 'ի բանս իւր ճոխացաւ․*
*Սերմն ըզնոյն յՈւետարան անդըր ցանեաց բեմին քարոզ։*
*Ընդ վայր հուսկ ուրեմն հարեալ բանին բացան ականողք․*
*Մերժեալ 'ի բաց վըտարեաց զայն 'ի ճառից ււագաչուք․*
*Եւ համբաւեալ 'ի բնաւ յայս ազգըս քերթութեանց չարախտավատ՝*
*Շնորհիւ թոյլ արար չարդել զմուտըս նորին յՄրձանագիր․*
*Շատ է զի նըրբութիւն իւր ճահապէս փայլենազարդ*
*Լոկ զխմացուածովք՝ և մի զբառիւք անկանիցի։*

Այսպէս դուլ առին 'ի բնաւ ուստեք չըփոթք խառնակութեանց.
Բայց և այնպէս Ցիւլիւպէնք կացին Թացին 'ի յարքունիս,
Անալի ծաղրածուք, եղուկ գուսանք պապնակատակ,
Անարուեստ խաղու բառից հնացեալ զուռամ պաշտօնատարք։
Քաւ, մի, լթէ 'նդ անցանելն ըզբառիւ' նուրբ հնարիւք մուսայ
Ի զբօսանս ինչ ոչ ուրեք խաղուց ծըպտեալ կատակեացէ,
Եւ ոչ յիմաստ ինչ երկդիմի զեղծցի եկիւք բարեպատեհ.
Այլ հեռի կալջիր յայդմիկ ըզծաղրալից անչափութիւն,
Եւ մի զհետ պընդիցիս ոչընչաքեսյ սայրիւ սլաքի
Սրագոյն եսյարդարել զունայնախօս արձանագիր։
Համայն քերթածաց չուք անձնիւր գեղն է բնակաւոր։
Պարոյրըն կեղտածին 'ի բնէ' զգեցեալ է զպարզութիւն.
Գերեալն ընդ օրինօք Գեղօնն աւուրց իւրոց զառամ՝
Համբուն 'ի չնորհըս խանդից երգոց փայլէն յոլովակի.
Իսկ Մանրերգ' ևս անպաճոյճ, ազնըւագոյն բանիցն յոլորս,
Շընչեալ բուրէ զքաղցրութիւն, զգորով փափուկ և ըզսէր։
Եռանդն 'ի հանդէս գալոյ, և ոչ եպերանաց
Ի տաղիցն Հեգնութեան վառեաց 'ի զէն զճըշմարտութիւն.
Լուկիլեայ նախ ձեռներէց զայն 'ի տեսիլ արկանելոյ'
Ըզճըշգրիտն հայելի հան չուայտանացն Հռովմայեցւոց.
Զլաւութեանըն գըձձելոյ վրէժ առ 'ի խրոխտ մեծութենէ,
Գեսպակաւոր 'ի վատազգւոյն' ըզհետի առն ազնըւաշուք։
Ի գառնութիւնս յայս բիր խառնեաց ըզզուարթ կայտառն Որատիոս.
Ջէր այլ ևս անձնահաճ ոք կամ չամբուշն անպատուհաս.
Եւ վայ անուան անուանելոյ' եթէ արդար ըստգըտանօք
Անբաժ 'ի Փնասուէ չափուց 'ի տաղըս մուտ կալաւ։
Խըրթին 'ի տաղս իւր Պերսէոս, բայց սեղմ և կուռ և սերտ 'ի բան'
Սակաւ բառանոյն և իմաստըս գուն գործեաց բովանդակել։
Ի չուինըն բարձրագոչ վարժարանին իւրում Յօբնաղ'
Ած ձըգեաց 'ի ծայրայեղս ըզխայթիչ բանս իւր քան ըզչափ։
Այլ 'ի քերթեալսն անդ հօծ 'ի հօծ ահագնացայտ ճըշմարտութեամբք
Նըրբահանճար գիւտից գեղոյ ցոլան ցայտեն փայլատակունք.
Որպէս այն ինչ 'ի ձեռս առընկալեալ զգիրն 'ի կապրեայ'
Մանրեսցէ զՍէյանոսին զանդրի զառեալն 'ի պաշտօն.
Կամ հապճեպ մինչ 'ի խորհուրդ գալ բռւռն առնէ սինկլիտոսաց
Մարդելոյզ վատորերոյն առ կեղակարծ ոք բըռնաւոր.
Կամ մինչ 'ի գիր հարեալ ըստ չափ ըզլատինեանըն ցոփութիւն'
Արծաթոյ տայ բեռնակրին հռովմայեցւոյ զՄեսալինա.
Գըրեանն իւր եռանդուն յամենուստ յաչըս նըշողեն։
Ներկուռ վարժապետացս այս աշակերտ ճարտարարուեստ
Բէնյէ միայն 'ի մեզ յօրինակաց նոցուն մարզեալ,

digitised by A.R.A.R.@

Ի հնացեալն յոճ տակաւին նորանոր շնորհս բարձեալ բերէ։
Իցէ՞ բանիցն ևս ակն ածեալ 'ի մաքրասէրն ընթերցողէ,
Ոչ նոյն տիպարք էին՝ դ. վայրացն՝ յոր հապըստէպ վարէր քերթողն,
Եւ կամ թէ ոչ շընական լըկտի տաղիցն 'ի ձայն ժըպիրհ
Ցոյզ ևխռով զարթուցանէր պարկեշտասուն 'ի լըսելիս։
Լատինն 'ի բանս իւր ընդ վայր զհամեստութիւնն հարեալ 'նդ ոտնէ,
Այլ պատկառ լինել արժան 'ի գաղղիացի 'նթերցանելույն.
Թըշնամանք են նմա և դոյզն անսուրբ մըտաց ազատութիւն՝
Թէ զպատկերն անդէն բառից պատկառութիւն չամոքեսցէ։
Ի հեգնութեան ևս է շընորհք ինձ ամօթլեած կամահաճոյ.
Եւ յորմէ կայն համեստութեան քարոզ՝ փախչիմ 'ի լըրբենւոյն։
Միով սոսկ քերթածոյս բերրի բանիւք հանճարիմաց
Մեղմեխն 'ի ծնէ Գաղղիացին զՇէրն ոլորեաց 'ի ցուցս երգոյ,
Անխորհուրդ քըմաց հաճոյք՝ որ շուրջ եկեալ ձայնիւ նուագաց
Թըռչին բերան 'ի բերանոյ հըռչակ հարեալ ճեմ ըզճեմի։
Գաղղիացւոյն պարզին 'ի տաղս յայսոսիկ տենչք ազատամիտ.
Գըգուանաց մանկանս այս կամք են զբօսալիր ծնանել 'ի ծոց։
Սակայն մի ընաւ զԱստուած, վընասաբեր դու ծաղրածու,
Այպանակատակ բանից՝ զահեղն առնուցուս կէտ նըպատակի։
Համայն այս բանից խաղք՝ զոր բարձր առնեն աստուածուրացք
Ուր ուրեմն ըզխեղկատակն ածցեն 'ի Գռեւ թըշուառաբար։
Պահանջի նոյն և 'ի ցուցս անդ ուղղամիտ բան և արուեստ.
Սա՛կայն և այնպէս երբեմն է զի գինեաւ և 'ի բախտէն
Զարթուցեալ 'ի խանդս երգոց անսաւ մուսայ վայրենամիտ,
Եւ կըցկըցել անհանճար տաղից նոյն յանդս առ Լինիէռ։
Այլ տե՛ս՝ բախտիւդ այդ խաբուսիկ՝ որ ձեռն ետ երգըս պաճուճել
Մի՛ հասեալ խոլ գոռոզութիւն զքեզ ծըխալից փըքացուսցէ։
Է զի դոյզն ինչ տաղից ուրեք գըրչակ յոխորտապանծ
Շորթէ յանձն իւր զիրաւունս անդէն քերթող հանդիսացեալ.
Մի՛ ևս այլ 'ի քուն մըտցէ՝ չև նուագ մի նախ արուեստակեալ,
Եւ փոխադրէ կըրկին երիս յանկարծաբուխս այգուն այգուն,
Դարձեալ նըշան մեծ՝ թէ և ոչ վայրավատին մըտացն յաչխոյժս
Անդէն իսկ և իսկ 'ի տիպ տըւեալ ըզցնորսըն բանդագուշ,
Ի ճակատ քաղուածոյից առցէ ձեռամբըն Նանտէցւոյ
Ըզդէմս իւր նըկարել պըսակաւոր 'ի սարդենեաց։

Թրգմ. Հ. ԹԱԴԷՈՍ ԹՈՎՄԱՅԱՆ

digitised by A.R.A.R.@